Միջանկյալ գրավոր և բանավոր ստուգումներ	Blue		Blue	Red	Red	Red	Green		
Ստուգարքներ	Blue		Blue	Red	Red		Green		
Բանավոր, գրավոր քննություններ	Blue		Blue	Red	Red	Red	Green		
Թիմային, նախագծային և հետազոտական աշխատանքներ.									
բանավեճ				Red	Red	Red			
հետազոտական, վերլուծական աշխատանք	Yellow	Blue		Red	Red	Red			
խմբային առաջադրանքներ, անհատական և խմբային նախագծեր,							Green		
պարտադիր գրականության ընթերցում				Yellow		Red			
օտար լեզվով կատարվող զեկուցումներ	Yellow	Blue							
Կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն	Blue	Blue	Blue	Red	Red	Red	Green		
Պրակտիկաների հաշվետվություններ	Blue		Blue	Red	Red		Green		
Գրագողության ստուգում	Yellow		Blue	Yellow	Red	Red			

ՀՀ, ԵՊՀ ԻՄ – Հայաստանի հանրապետություն, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ
ՀՀ, ՎՊՀ- Հայաստանի հանրապետություն, Վանաձորի պետական համալսարան
ՌԴ, ՄՊՀ – Ռուսաստանի Դաշնություն, Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան
ՌԴ, ՆԷԿՊՀ- Նովոսիբիրսկի Էկոնոմիկայի և կառավարման պետական համալսարան
ԱՄՆ, ՄՏԻ- Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ

Ուսանողների ներհոսքի և արտահոսքի պատճառները և բուհերի ցանկերը

h/h	Ուսանողների ներհոսքի հիմնական պատճառները	Տոկոսային բաշխվածությունն ըստ պատճառների
1	Սոցիալական խնդիրները և բնակության վայրի փոփոխությունը	29.20
2	Մասնավոր բուհ-ից՝ պետական բուհ տեղափոխությունը	4.38
3	Երկրորդ մասնագիտական բարձրագույն կրթություն ստանալը	5.11
4	ՄՄՈւՀ-ի շրջանավարտների՝ բարձրագույն մասնագիտական կրթության ստանալը	61.31

h/h	Ուսանողների արտահոսքի հիմնական պատճառները	Տոկոսային բաշխվածությունն ըստ պատճառների
1	Ամուսնության և բնակության վայրի փոփոխությունը	87.5
2	Մասնագիտության փոփոխությունը	12.5

<i>Ուսանողների ներհոսք</i>						
	<i>Երկիր, հաստատություն</i>	2015-2016	2016-2017	2017-2018	2018-2019	2019-2020
1.	ՀՀ, Երևանի պետական համալսարան	1	3	5	2	2
2.	ՀՀ, Հայաստանի ազգային ազրարային համալսարան	4	5	3	4	2
3.	ՀՀ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան	1	-	-	-	-
4.	ՀՀ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	-	2	1	-	-
5.	ՀՀ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	-	-	-	-	1
6.	ՀՀ, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համ.	-	1	1	1	-
7.	ՀՀ, Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան	-	-	-	1	-
8.	ՀՀ, Հայաստանի ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա	-	-	1	-	-
9.	ՀՀ, Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ	-	-	-	1	-
10.	ՀՀ, Ոստիկանության կրթահամալիր	-	-	-	-	1
11.	ՀՀ, Վանաձորի Հ.Թումանյանի անվ. պետական մանկավարժական համ.	-	-	-	-	1
12.	ՀՀ, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան	1	-	1	-	-
13.	ՀՀ, Երևանի Մ.Խորենացու անվան համալսարան	1	-	-	-	-
14.	ՀՀ, Երևանի «Եվրասիա» միջազգային համալսարան	1	-	-	-	1

15.	ՀՀ, Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարան	1	-	-	-	-
16.	ՌԴ, Սանկտ-Պետերբուրգի բուսական պոլիմերների պետական տեխնոլոգիական համալսարան	-	1	-	-	-
Ընդամենը՝		10	12	12	9	8
այդ թվում՝ երկրորդ մասնագիտություն						
17.	ՀՀ, Երևանի «Հայբուսակ» համալսարան	-	-	-	1	-
18.	ՀՀ, Երևանի կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համ.	-	1	-	-	-
19.	ՀՀ, ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ /ՀՀ	-	-	2		
20.	ՀՀ, Վ.Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համ.	-	-	-	1	
21.	ՀՀ, Հայաստանի ազգային ագրարային համալսարան	-	-	-	1	
22.	ՀՀ, Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական մանկավարժական համ.	-	-	-	-	1
Ներհոսք քոլեջներից						
23.	ՀՀ, Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ	9	10	8	8	9
24.	ՀՀ, Դիլիջանի պետական քոլեջ	8	5	9	4	4
25.	ՀՀ, Դիլիջանի արվեստի պետական քոլեջ	-	1	-	-	1
26.	ՀՀ, Բերդի պետական քոլեջ	1	-	-	-	1
27.	ՀՀ, Նոյեմբերյանի պետական քոլեջ	-	1	2	-	1
28.	ՀՀ, Աբովյանի պետական քոլեջ	-	-	-	1	-
29.	ՀՀ, Երևանի հենակետային բժշկական պետական քոլեջ	-	-	-	-	1
Ընդամենը՝		18	17	19	13	17
Ուսանողների արտահոսք						
	Երկիր, հաստատություն	2015-2016	2016-2017	2017-2018	2018-2019	2019-2020
1	ՀՀ, Երևանի պետական համալսարան	2	3	2	1	-
2	ՀՀ, Վ.Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան	2	2	-	1	-
3	ՀՀ, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համ.	-	-	1	1	-
4	ՀՀ, Գավառի պետական համալսարան	1	-	-	-	-
Ընդամենը՝		5	5	3	3	0

Մասնագիտության կրթական ծրագրի կառուցվածքի համեմատական վերլուծություն (ԵՊՀ ԻՄ , Middlesex University, ՀՊՄՀ և ՌԴ պ/չ կրթական ծրագրերի օրինակով)

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	Middlesex University (London)	ՀՊՄՀ /Հայկական պետական մանկավարժական համալսարան/	ՌԴ պ/չ
<p>1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը</p> <p>2. Բուհը</p> <p>3. Ծրագիրը ում կողմից է հավատարմագրված</p> <p>4. Շնորհվող որակավորումը</p> <p>5. Ծրագրի մեկնարկի ուս. տարին</p> <p>6. Ուսումնառության լեզուն</p> <p>7. Ուսուցման ձևը</p> <p>8. Ծրագրի ընդունելության չափանիշները</p> <p>9. Ծրագրի նպատակները</p> <p>10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները.</p> <ul style="list-style-type: none"> Մասնագիտական գիտելիք և իմացություն, Գործնական մասնագիտական կարողություններ, Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ, <p>11. Ծրագրի ուսումնական պլանի առկայության մասին</p> <p>12. Ուսումնական պլանի քարտեզի առկայության մասին</p> <p>13. Գնահատման ձևերը</p> <p>14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները</p> <p>15. Ուսումնառության</p>	<p>1. Ծրագրի անվանումը /Programme title</p> <p>2. Բուհի անվանումը /Awarding institution</p> <p>Ուսուցանող բուհը /Teaching institution</p> <p>3. Ծրագիրը հավատարմագրված է /Programme accredited by</p> <p>4. Շնորհվող որակավորումը /Final qualification</p> <p>5. Ուսումնական տարին /Academic year</p> <p>6. Ուսումնառության լեզուն /Language of study</p> <p>7. Ուսումնառության ձևը /Mode of study</p> <p>8. Ծրագրին թույլտվության չափանիշները / Criteria for admission to the Programme</p> <p>9. Կրթական ծրագրի նպատակները /Educational aims of the Work Based Learning Framework/</p> <p>10. Կրթական վերջնարդյունքները / Programme Outcomes</p> <ul style="list-style-type: none"> կոմպետենցիա կոմպետենցիայի ձևավորման դասավանդման և ուսումնառության մեթոդները կոմպետենցիայի ձեռք բերման գնահատման մեթոդները <p>11. Ծրագրի կառուցվածքը և պահանջները, մակարդակները, կրեդիտները և որակավորումները /Programme structure and requirements, levels, modules, credits and qualifications</p> <p>12. Ուսումնական պլանի քարտեզն ըստ</p>	<p>1. Բակալավրի մասնագիտական գործունեության բնութագիրը.</p> <ul style="list-style-type: none"> բնագավառը, օբյեկտները, տեսակները, խնդիրներն` ըստ տեսակների, <p>2. Մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման արդյունքներին համապատասխան ձևավորվող կոմպետենցիաները.</p> <ul style="list-style-type: none"> Գործիքային, Սոցիալ-անձնային և համընդհանուր մշակութային, Միջանձնային, Համակարգային, Սոցիալական (մասնագիտական), Ուսուցչական: <p>3. Մասնագիտության ընդհանուր բնութագիրը.</p> <ul style="list-style-type: none"> որակավորումը, գործունեության ոլորտները, գործունեության օբյեկտները, շրջանավարտին ներկայացվող պահանջները` գիտենա, կարողանա, տիրապետի: <p>4. Կրթական ծրագրի կառուցվածքը (կրթամասերը):</p>	<p>1. Կիրառման տիրույթը</p> <p>2. Պատրաստման ուղղվածության բնութագիրը,</p> <p>3. Բակալավրի մասնագիտական գործունեության բնութագիրը,</p> <ul style="list-style-type: none"> մասնագիտական գործունեության տիրույթը, մասնագիտական գործունեության օբյեկտը, մասնագիտական գործունեության ուղղությունները, լուծվող մասնագիտական խնդիրները, <p>4. Բակալավրի հիմնական կրթական ծրագրի յուրացման արդյունքների վրա դրվող պահանջները.</p> <ul style="list-style-type: none"> ընդհանուր մշակութային կոմպետենցիաներ, մասնագիտական կոմպետենցիաներ, <p>5. Բակալավրի հիմնական կրթական ծրագրի կառուցվածքին ներկայացվող պահանջները.</p> <ul style="list-style-type: none"> կրթամասերը / հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական,

<p>օժանդակության ռեսուրսները և ձևերը</p> <p>16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս</p> <p>17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ</p> <p>18. Ծրագրի.</p> <ul style="list-style-type: none"> - կրթական վերջնարդյունքները - ուսումնական պլանի քարտեզը - ուսումնական պլանը <p>19. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական մոդուլների նկարագրիչները, դասընթացների, պրակտիկաների, կուրսային աշխատանքների, ավարտական աշխատանքի:</p>	<p>դասընթացների կրթական վերջնարդյունքների /A curriculum map relating learning outcomes to modules</p> <p>13. Տեղեկատվություն գնահատման կանոնների մասին</p> <p>14. Աշխատանքի տեղավորման հնարավորությունները /Placement opportunities</p> <p>15. Ապագա կարիերան /Future careers</p> <p>16. Հատուկ աջակցություն ուսումնառության համար / Particular support for learning</p> <p>17. JACS կոդը (կամ այլ համապատասխան կոդավորման համակարգ) /JACS code (or other relevant coding system)</p> <p>18. Հղումներ /Reference points</p> <p>19. Այլ տեղեկատվություն /Other information</p>	<p>5. Ծրագրի մոդուլային կառուցվածքը (ձևավորվող կոմպլեքսներով):</p> <p>6. Կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնին ներկայացվող պահանջները:</p> <p>7. Կրթական ծրագրի իրականացման պայմաններին ներկայացվող պահանջները.</p> <ul style="list-style-type: none"> • պրակտիկաների կազմակերպմանը, • ուսումնամեթոդական գործընթացի տեղեկատվական և ուսումնամեթոդական ապահովմանը, • կադրային ապահովմանը, • ֆինանսական ապահովմանը, • նյութատեխնիկական ապահովմանը, • ծրագրի իրականացման որակի գնահատմանը, <p>8. Ամփոփիչ ատեստավորմանը ներկայացվող պահանջները:</p>	<p>մաթեմատիկական և բնագիտական, մասնագիտական/,</p> <ul style="list-style-type: none"> • կրթամասերի կառուցվածքը /հիմնական և կամընտրական մասեր/, • դասընթացների վերջնարդյունքներին համապատասխան ձևավորվող կոմպլեքսները: <p>6. Բակալավրի հիմնական կրթական ծրագրի իրականացման պայմանների վրա դրվող պահանջները</p> <p>7. Բակալավրի հիմնական կրթական ծրագրի յուրացման որակի գնահատումը:</p>
---	---	--	--

Կրթական ծրագրերի կառուցվածքի համեմատական վերլուծություն

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերն իրենց կառուցվածքով ամբողջությամբ համադրելի են ԵՊՀ համապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ: Կրթական ծրագրերի կառուցվածքի համեմատական վերլուծության համար դիտարկված են Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, Լոնդոնի Middlesex-ի համալսարանի և ՌԴ ըստ պ/չ-ների կրթական ծրագրերի կադրայինները: Ներկայացված ընդհանուր կառուցվածքների համեմատությունը թույլ է տալիս ասել, որ մասնագիտությունների կրթական ծրագրերի վրա դրվող պահանջները համահունչ են եվրոպական չափորոշիչների պահանջներին: Ինչպես նկատում ենք, կրթական ծրագրերում առանձնահատուկ տեղ է հատկացված կրթական ծրագրով ուսումնառությամբ ձեռք բերվող **կրթական վերջնարդյունքներին**՝ ձևակերպված կոմպլեքսների տերմիններով: Բացի ծրագրի կրթամասերի կառուցվածքից, մոդուլային կառուցվածքից, բովանդակության պարտադիր նվազագույնին ներկայացվող պահանջներից, ԵՊՀ ԻՄ մասնագիտությունների կրթական ծրագրերը պարունակում են նաև ա)կրթական վերջնարդյունքների ցուցակը, բ) ըստ դասընթացների կրթական վերջնարդյունքների ձևավորման քարտեզը: Կրթական ծրագրում կարևորագույն տեղ է հատկացված **դասընթացների/մոդուլների նկարագրիչներին**, որոնք յուրաքանչյուր դասընթացի/մոդուլի համար պարունակում են կրթական վերջնարդյունքները, ուսումնական ծանրաբեռնվածությունը, դասընթացի հակիրճ նկարագիրը և նպատակները, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները և այլն:

ՌԴ պ/չ-ում և ՀՊՄՀ-ի կրթական ծրագրի կառուցվածքում հարկ է կարևորել բակալավրի հիմնական կրթական ծրագրի **իրականացման պայմանների վրա դրվող պահանջների և հիմնական կրթական ծրագրի յուրացման որակի գնահատման չափանիշների առկայությունը**: ԵՊՀ ԻՄ-ում այս երկու խնդիրները լուծվում են դասընթացների շրջանակներում, որոնք մանրամասն ներկայացված են յուրաքանչյուր դասընթացի փաթեթում: Չունենք ծրագրի յուրացման որակի գնահատման չափանիշներ կամ ցուցիչներ, այն գնահատվում է մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրման, դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների կարծիքի ուսումնասիրման, ավարտական կուրսերի հետ հանդիպում-քննարկումների միջոցով:

Մասնագիտության կրթական ծրագրի համեմատական վերլուծությունն ըստ կառուցամասերի և կառուցամասերում կրեդիտների բաշխվածության

ԵՊՀ ԻՄ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»	ՌԴ, Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան, «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» ԿԾ	ՌԴ, Նովոսիբիրսկի պետական տեխնիկական համալսարան «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» ԿԾ
<p>1. Ընդհանուր կրթական կառուցամաս (40 կրեդիտ)</p> <p>Պարտադիր դասընթացներ (36 կրեդիտ) Դասընթացներ, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը: Կամրնտրական դասընթացներ (4 կրեդիտ) Դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը:</p> <p>2. Մասնագիտական կառուցամաս (170 կրեդիտ) Պարտադիր դասընթացներ (158 կրեդիտ) Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը: Կամրնտրական դասընթացներ (12 կրեդիտ) Ապահովում են տվյալ մասնագիտության անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: 1-ին և 2-րդ մասերը միասին՝ 40+170=210 կրեդիտ</p> <p>3. Կրթական այլ մոդուլներ (30 կրեդիտ) Կուրսային աշխատանք (4 կրեդիտ) Երկու կուրսային աշխատանքների կատարում: Մասնագիտական պրակտիկա (6 կրեդիտ)</p> <p>Ավարտական աշխատանք (20 կրեդիտ)</p>	<p>1. Հումանիտար, սոցիալ և տնտեսագիտական կառուցամաս (44 կրեդիտ) Պարտադիր մաս (32 կրեդիտ) Ներառում են օտար լեզու, պատմություն, փիլիսոփայություն, տնտեսագիտություն, սոցիոլոգիա դասընթացները: Կամրնտրական մաս (12 կրեդիտ) Ընտրովի դասընթացներ և մասնագիտական հաղորդակցման համար օտար լեզվի դասընթաց:</p> <p>2. Մասնագիտական կառուցամաս (172 կրեդիտ) Հիմնական մաս (109 կրեդիտ) Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը: Կամրնտրական մաս (63 կրեդիտ) Ապահովում են տվյալ մասնագիտության անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: 1-ին և 2-րդ մասերը միասին՝ 44+172=216 կրեդիտ</p> <p>3. Կրթական այլ մոդուլներ (24 կրեդիտ) Կուրսային աշխատանք (0 կրեդիտ) Պրակտիկա (15 կրեդիտ) <i>Ուսումնական պրակտիկա (6 կրեդիտ)</i> <i>Արտադրական պրակտիկա (5 կրեդիտ)</i> <i>Նախադիպլոմային պրակտիկա (4 կրեդիտ)</i> Պետական ամփոփիչ ատեստավորում (9 կրեդիտ) Պետական քննություն (3 կրեդիտ) Ավարտական աշխատանք (6 կրեդիտ)</p>	<p>1. Դասընթացներ (141 կրեդիտ) Պարտադիր մաս (135 կրեդիտ) Դասընթացներ, որոնք ձևավորում են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքը և ապահովում մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը: Կամրնտրական մաս (6 կրեդիտ) Դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը:</p> <p>2. Դասընթաց կրթական հարաբերությունների մասնակիցների կողմից ձևավորվող (75 կրեդիտ) Պարտադիր մաս (38 կրեդիտ) նեղ մասնագիտացում Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը: Կամրնտրական մաս (37 կրեդիտ) Ապահովում են տվյալ մասնագիտությամբ անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: 1-ին և 2-րդ մասերը միասին՝ 141+75=216 կրեդիտ</p> <p>3. Կրթական այլ մոդուլներ (24 կրեդիտ)</p> <p>Պրակտիկա (15 կրեդիտ) <i>Ուսումնական պրակտիկա (5 կրեդիտ)</i> <i>Արտադրական պրակտիկա (10 կրեդիտ)</i> Պետական ամփոփիչ ատեստավորում (9 կրեդիտ)</p>

Մասնաճյուղի կրթական ծրագրերի վերանայման արդյունքներ

	Ամբիոն	Հիմք	Իրականացված փոփոխությունը
Տնտեսագիտության ֆակուլտետ			
1.	Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն	07.05.18 արձ. 10	«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» 2018-2022 կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառել հետևյալ փոփոխությունները. <ul style="list-style-type: none"> • «Կառավարչական հաշվառում» դասընթացը դարձնել կամրնտրական, • «Հաշվապահական հաշվառում» դասընթացը տրոհել «Հաշվապահական հաշվառում-1», «Հաշվապահական հաշվառում-2» դասընթացների, • «Ֆինանսական համակարգի կարգավարում» դասընթացը փոխարինել «Բանկային գործունեության կարգավորում», • «Տնտեսության գործունեության վերլուծություն» դասընթացը մտցնել պարտադիր կառուցամասում, • «Սոցիոլոգիայի հիմունքներ» դասընթացը դարձնել պարտադիր՝ «Տնտեսական սոցիոլոգիա» անվանմամբ:
2.		29.04.19 արձ.10	«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» 2019-2023 կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառել հետևյալ փոփոխությունները. <ul style="list-style-type: none"> • ավելացնել «Մաթլաբ» դասընթացը որպես կամրնտրական, • ավելացնել «Ֆինանսական հոսքերի կառավարում» դասընթացը որպես կամրնտրական, • ավելացնել 2-րդ մասնագիտական պրակտիկա 6-րդ կիսամյակում, • «Կուրսային աշխատանք-2»-ը 6-րդից տեղափոխել 7-րդ կիսամյակ, • մի շարք դասընթացներում կատարել կիսամյակների, կրեդիտների, կամ ժամաքանակների փոփոխություններ:
3.		17.05.19 արձ. 11	Ըստ «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» 2018-22 կրթական ծրագրի արտաքին փորձաքննության արդյունքների «Ֆինանսական ինստիտուտներ և շուկաներ» և «Ֆինանսների կառավարում» առարկաների համար սահմանել ավելի մեծ ժամաքանակ ու կրեդիտներ, այդ փոփոխությունները ներառել 2020-2024 կրթական ծրագրի ուսումնական պլանում
4.	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոն	25.05.19 արձ.9	Ըստ «Զբոսաշրջություն» 2018-22 կրթական ծրագրի արտաքին փորձաքննության արդյունքների վերանայել կրթական ծրագիրը և 2019-23 ուսումնական պլանում ներառել հետևյալ փոփոխությունները. <ul style="list-style-type: none"> • նվազեցնել «Համաշխարհային տնտեսության աշխարհագրություն», «Միջազգային զբոսաշրջություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Էկոլոգիական զբոսաշրջություն», «Գյուղական զբոսաշրջություն» մասնագիտական և «2-րդ օտար լեզու» կամրնտրական դասընթացի լսարանային ժամերը, • ավելացնել «Զբոսաշրջության հիմունքներ» մասնագիտական դասընթացի դասախոսությունների ժամաքանակը, • թարմացնել դասընթացների գրականության ցանկերը, • վերանայել որոշ դասընթացների կրթական վերջնարդյունքները:
Բնական գիտությունների ֆակուլտետ			

5.	Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոն		<p>«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի 2019-2023թթ. ուսումնական պլանում ներառել հետևյալ փոփոխությունները ըստ 2018-2022թթ. կրթական ծրագրի արտաքին փորձաքննության արդյունքների.</p> <ul style="list-style-type: none"> • Ուսումնական պլանից հանել «Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք», «Կիսահաղորդչային սարքերի ֆիզիկա» դասընթացները, • «Ռադիոէլեկտրոնիկա» դասընթացը փոխարինել «Միկրոէլեկտրոնիկա» դասընթացով, • «C#-ծրագրավորման լեզու» դասընթացը դարձնել պարտադիր, • Ավելացնել «Java ծրագրավորման լեզուն» դասընթացը որպես կամրնտրական, • «Հանրահաշիվ և երկրաչափություն» դասընթացը վերանվանել «Անալիտիկ երկրաչափություն և հանրահաշվի տարրեր», • մի շարք դասընթացներում կատարել կիսամյակների, կրեդիտների, կամ ժամաքանակների փոփոխություններ:
----	--	--	--

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ

6.	Հայոց լեզվի և գրականության ամբիոն	27.01.17 արձ.7 18.05.17 արձ.12	<p>Վերանայել 2016-20 ուսումնական պլանը նոր 2017-21 ուսումնական պլանը կազմելու համար.</p> <ul style="list-style-type: none"> • հանել «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա», «Մանկավարժություն», «Հայ գրականության դասավանդման մեթոդիկա», «Մանկավարժական պրակտիկա» դասընթացները, • ավելացնել «19-րդ դարի հայ գրականության պատմություն-1», «19-րդ դարի հայ գրականության պատմություն-2», «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն-2», «Բարբառագիտության հիմունքներ» և «Արևմտահայերեն» դասընթացների կրեդիտների և դասաժամերի քանակը, • Ռուս գրականության պատմություն» առարկան 6-րդ կիսամյակից տեղափոխել 3-րդ կիսամյակ և հատկացնել 4 կրեդիտ, • Ավելացնել «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն-1» առարկայի կրեդիտների քանակը, • Ավելացնել նոր դասընթաց՝ «Սփյուռքահայ գրականության պատմություն»:
7.		18.04.19 արձ. 5	<p>«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 2019-23 նոր ուսումնական պլանում ներառել հետևյալ փոփոխությունները.</p> <ul style="list-style-type: none"> • կամրնտրական «13-18-րդ դարերի հայ քնարերգությունը» դասընթացը փոխարինել «Հեռուստաքննադատություն» դասընթացով, • կամրնտրական «Հայկական տաղաչափություն» դասընթացը փոխարինել «Մշակութային լրագրություն» դասընթացով, • կամրնտրական «Ռուս-հայերեն թարգմանության խնդիրներ» դասընթացը փոխարինել «Սոցիալական խնդիրների լրագրություն» դասընթացով, • կամրնտրական «Լեզվանշանագիտություն» դասընթացը փոխարինել «Առցանց մեդիա» կամ «Ռազմական լրագրություն» դասընթացներով, • կամրնտրական «Գրաբարի և արդի արևելահայերենի ընդհանրությունները և տարբերությունները» դասընթացը փոխարինել «Մեդիա, հաղորդակցություն և մշակույթ» դասընթացով:

8.	Մանկավարժության և հոգեբանության ամբիոն	13.04.18 արձ.11	<p>«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» 2018-22 կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառել հետևյալ փոփոխությունները.</p> <ul style="list-style-type: none"> • «Շախմատի տեսություն և պրակտիկա», «Տեխնոլոգիա և տարրական դպրոցում տեխնոլոգիայի ուսուցման մեթոդիկա», «Կերպարվեստ և տարրական դպրոցում կերպարվեստի ուսուցման մեթոդիկա», «Երաժշտություն և տարրական դպրոցում երաժշտության ուսուցման մեթոդիկա» դասընթացները միավորել և ներկայացնել մենկ կիսամյակ ծանրաբեռնվածությամբ, • 7-րդ կիսամյակում ավելացնել «Հոգեբանական ծառայության կազմակերպումը դպրոցում» դասընթացը:
9.		21.06.19 արձ. 13	<p>«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» 2019-23 կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառել հետևյալ փոփոխությունները.</p> <ul style="list-style-type: none"> • ուսումնական պլանից հանել «Մաթեմատիկա-Շ», «Մաթեմատիկա-Բ», «Մայրենի լեզու-5,6,7», «Կրտսեր դպրոցականի հոգեկանի զարգացման հիմնախնդիրները», «Կրտսեր դպրոցականի ֆիզիկական դաստիարակության մեթոդիկա», «Գրականագիտության հիմունքներ», «Կայուն զարգացման հիմնախնդիրներ», «Էթիկա և էթիկետ», «Կիրառական սոցիոլոգիա», «Մանկան զարգացման հոգեբանություն», «Կրթության իրավունք», «Քաղաքացիական կրթություն», «Գլոբալիզացիայի հիմնախնդիրներ», «Հոգաբանական ծառայությունը դպրոցում», «Մեդիակրթություն» դասընթացները, • ուսումնական պլանում ներառել «Հայոց լեզու և գրականություն-1,2», «Թվաբանության հիմունքներ-1,2», «Հանրահաշվական կա-ռույցներ», «Կոմբինատորիկայի տարրեր», «Երկրաչափության հիմունքներ», «Գործնական հոգեբանություն», «Հատուկ հոգեբանության հիմունքներ», «Հատուկ մանկավարժության հիմունքներ», «Մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ինտեգրված դասընթաց», «Միավորների կանխարգելման և հաղթա-հարման ուղիները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում», «Գործնական գրությունների ուսուցում», «Մայրենի ուսումնասիրման փոխգործուն մեթոդներ», «Մայրենի լեզվի մեթոդիկա-4», «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա-4» դասընթացները, • մի շարք դասընթացներում կատարել ժամաքանակների փոփոխություններ: <p>Հիմք ընդունելով «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» 2018-2022թթ. կրթական ծրագրի փորձաքննության արդյունքները 2020-23 ուսումնական պլանում ներառել հետևյալ փոփոխությունները.</p> <ul style="list-style-type: none"> • կատարել թեմատիկ փոփոխություն «Երեխայի իրավունքները և երեխայի իրավունքների պաշտպանության սոցիալական ինստիտուտները» դասընթացում, • «Այցելուականորոն թերապիա» դասընթացը 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակից տեղափոխել 4-րդ կուրսի 1-ին կիսամյակ կամրնտրական նշելով «Մանկական հոգեախտորոշում և հոգեթերապիա» դասընթացի հետ, • «Արտ-թերապիա» դասընթացի հետ որպես կամրնտրական ներառել «Խաղային թերապիա» դասընթացը:

1. Ուսանողների թիվն ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի

Բակալավրի կրթական ծրագիրը	Ուսուցման ձևը	2015-2016	2016-2017	2017-2018	2018-2019	2019-2020
Պատմություն	առկա	74	68	54	40	34
	հեռակա	172	175	154	140	109
Հայոց լեզու և գրականություն	առկա	65	53	45	39	33
	հեռակա	86	66	32	17	0
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	առկա	0	44	85	98	110
	հեռակա	0	36	69	76	95
Հոգեբանություն	առկա	14	14	11	11	5
	հեռակա	38	60	82	84	96
Մանկավարժություն և հոգեբանություն	առկա	38	29	10	0	0
	հեռակա	142	104	61	37	0
Անգլերեն լեզու և գրականություն	առկա	96	91	82	69	68
	հեռակա	8	8	7	0	0
Ֆրանսերեն լեզու և գրականություն	առկա	40	33	25	14	15
Ռուսաց լեզու և գրականություն	առկա	0	0	0	0	4
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	առկա	54	83	87	83	78
	հեռակա	39	60	88	95	98
Քարտեզագրություն և կադաստրային գործ	առկա	25	40	41	32	21
	հեռակա	59	74	83	84	55
Բնապահպանություն և բնօգտագործում	առկա	0	0	0	0	0
	հեռակա	97	95	74	65	82
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	առկա	13	0	0	0	0
	հեռակա	63	44	20	19	16
Տնտեսագիտություն	առկա	105	95	75	47	23
	հեռակա	228	232	183	142	91
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	առկա	0	0	13	23	43
	հեռակա	0	0	24	35	50
Մերվիս	առկա	53	49	30	21	12
	հեռակա	80	81	58	44	20
Զբոսաշրջություն	առկա	0	0	5	10	31
	հեռակա	0	0	15	22	37
Դիզայն	առկա	22	26	54	53	52
Կիրառական արվեստ	առկա	66	33	14	7	0
Դեկորատիվ-կիրառական արվեստ	առկա	0	0	0	0	12
Համակարգչային գրաֆիկա	առկա	0	6	0	0	0
Էկոլոգիական քիմիա	հեռակա	21	19	19	0	0
Ընդամենը	առկա	665	664	631	547	541
	հեռակա	1033	1054	969	860	749
	միասին	1698	1718	1600	1407	1290



2. Շարունակական կրթություն

Հաստատություն/երկիր	2015-2016	2016-2017	2017-2018	2018-2019	2019-2020
Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ / ՀՀ	9	10	8	7	7
Դիլիջանի պետական քոլեջ / ՀՀ	8	4	9	4	2
Դիլիջանի արվեստի պետական քոլեջ / ՀՀ	-	1	-	-	1
Դիլիջանի ռադիոէլեկտրոնային սարքաշինության տեխնիկում / ՀՀ	-	-	-	-	2
Իջևանի պետական քոլեջ / ՀՀ	-	-	-	1	2
Բերդի պետական քոլեջ / ՀՀ	1	-	-	-	-
Բերդի պետական բազմագործառնության քոլեջ / ՀՀ	-	-	-	-	1
Նոյեմբերյանի պետական քոլեջ / ՀՀ	-	1	2	-	1
Աբովյանի պետական քոլեջ / ՀՀ	-	-	-	1	-
Երևանի պետական հենակետային բժշկական քոլեջ / ՀՀ	-	-	-	-	1
Ընդամենը	18	16	19	13	17


3. Ուսանողների տեղեկացվածությունը և բավարարվածությունը լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներից, ուսումնական խորհրդատուների աշխատանքից

Հարց	2014-15 %/մ. գն. 387 ուս.	2015-16 %/մ. գն. 158 ուս.	2016-17 %/մ. գն. 403 ուս.	2017-18 %/մ. գն. 330 ուս.	2018-19 %/մ. գն. 273 ուս.	Ընդհ. միջ.
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	66,2%	55,7%	77,2%	36,6%		58,9%
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	31%	34,1%	77,2%	9,1%		37,9%
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	79,8% 3,99	77,2% 3,86	69,6% 3,48	62,4% 3,12		72,3% 3,6
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված ուսումնական խորհրդատուի (կուրսղեկի) ծառայությունների մասին:	93,5%	93,0%	48,4%	70,9%	76,9%	76,6%
Որքանո՞վ են ուսանողները բավարարված ուսումնական խորհրդատուի աշխատանքներից:	4,8	4.64	4.41	4.04	4,44	4,47
Բավարարվա՞ծ եք արդյոք կրթական ծրագրի ղեկավարի ծառայություններից				78%	85%	81,5%

4. Ուսանողների բավարարվածությունը կարիերային նպաստող աշխատանքներից



5. Բավարարվածությունը ուսանողական խորհրդի գործունեությունից



6. Առարկայական օլիմպիադաների արդյունքները

2019թ. մարզի 34 հանրակրթական դպրոցներից օլիմպիադային մասնակցելու հայտ են ներկայացրել 268 աշակերտներ, մասնակցել է 235-ը: Մարզի աշակերտներից օլիմպիադայի 2-րդ փուլ է անցել 27-ը, որոնցից 2-ն արժանացել է 3-րդ կարգի դիպլոմի, 18-ը՝ գովասանագրի:

2018թ. դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար 13 առարկաների գծով կազմակերպված օլիմպիադաներին մասնակցել են մարզի 4 ավագ, 25 միջնակարգ դպրոցների և 1 վարժարանի շուրջ 285 աշակերտներ, նրանցից 43-ը հաղթահարել է 1-ին փուլը և մասնակցել ԵՊՀ-ում կազմակերպված օլիմպիադայի 2-րդ փուլին: Տարբեր պարզատրումներ են ստացել 22 աշակերտներ, որոնցից 3-ը՝ 1-ին, 3-ը՝ 2-րդ, 5-ը՝ 3-րդ կարգի դիպլոմներ, 11 աշակերտ ստացել է գովասանագիր:

2017թ. դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպված օլիմպիադաներին մասնակցել են մարզի 4 ավագ, 30 միջնակարգ դպրոցների և 2 վարժարանների

շուրջ 300 աշակերտներ, նրանցից 60-ը հաղթահարել են 1-ին փուլը և մասնակցել ԵՊՀ-ում կազմակերպված օլիմպիադայի 2-րդ փուլին: Տարբեր պարզևատրումներ է ստացել 20 աշակերտ, որոնցից 2-ը՝ 1-ին, 2-ը՝ 2-րդ, 2-ը՝ 3-րդ կարգի դիպլոմներ, 9 աշակերտ ստացել է գովասանագրեր:

2016թ. մարզի հանրակրթական 32 դպրոցներից թվով 300 աշակերտներ մասնակցել են ԵՊՀ-ի կողմից անցկացված օլիմպիադային: Երկրորդ փուլ անցել են 60 աշակերտներ: Մասնակիցներից 4 աշակերտ արժանացել են II կարգի և 3 աշակերտ՝ III կարգի պատվոգրի, 13 աշակերտ արժանացել է գովասանագրի:




2015թ. դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպված օլիմպիադաներին մասնակցել են մարզի 4 ավագ, 54 միջնակարգ դպրոցների և 2 վարժարանների շուրջ 320 աշակերտներ, տարբեր պարզևատրումներ են ստացել 46 աշակերտներ, որոնցից 6-ը՝ 2-րդ, 9-ը՝ 3-րդ կարգի դիպլոմներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5

1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձի չափը (հազար դրամ)

Տարակարգեր	01.08.2018թ	09.2018-10.2018	10.2018-12.2018	01.12.2019	01.01.2020
Պրոֆեսոր	167327	192426	222426	222426	222426
Դոցենտ, ասիստենտ	160052	184060	184060	184060	191000
Դասախոս	152777	175694	175964	175964	175964

2. Ներքին շահակիցների բավարարվածությունը վարչական և ուսումնասօժանդակ աշխատակազմից



3, Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքները.

Աղյուսակ 3. Դեկանի և դեկանի տեղակալի միջին գնահատականներն ըստ ֆակուլտետների

Ֆակուլտետ	Մ/գ 2015-18	2015-16		2016-17		2017-18
		1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	տարեկան
Բնական գիտությունների	4.79	4.82	4.81	4.85	4.79	4.68
Տնտեսագիտության	4.86	4.73	4.89	4.92	4.89	4.88
Հումանիտար գիտությունների	4.69	4.85	4.71	4.66	4.62	4.60
Կիրառական արվեստի	4.85	4.85	4.93	4.84	4.92	4.71
Մասնաճյուղում	4.80	4.81	4.84	4.82	4.81	4.72

Աղյուսակ 4. Դեկանատի գործավարի միջին գնահատականն ըստ ֆակուլտետների

Ֆակուլտետ	Մ/գ 2015-18	2015-16		2016-17		2017-18
		1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	տարեկան
Բնական գիտությունների	4.57	4.64	4.72	4.73	4.49	4.27
Տնտեսագիտության	4.91	4.85	4.88	4.96	4.93	4.95
Հումանիտար գիտությունների	4.78	4.88	4.78	4.81	4.73	4.7
Կիրառական արվեստի	4.84	4.82	4.93	4.91	4.9	4.62
Մասնաճյուղում	4.78	4.80	4.83	4.85	4.76	4.64

ՀԱՎԵԼՎԱԾ 6.

Աղյուսակ 1. Ամբիոնների հետազոտական ուղղությունները 2016-2019թթ.

	Ամբիոնի անունը	Հետազոտական ուղղությունները
1	Հայոց լեզվի և գրականության	Լեզվաբանություն, գրականագիտություն (թամրագյանագիտություն, թումանյանագիտություն), բանահյուսություն, բարբառագիտություն,
2	Օտար լեզուների	Դարձվածաբանություն, ոճաբանություն, բառագիտություն, գրական թարգմանություններ, մարդաբանական լեզվաբանություն, էթնոլեզվաբանություն, գործաբանական լեզվաբանություն /անգլերեն/
3	Հայոց պատմության և հասարակագիտության	Ազգագրություն, հայոց պատմություն (հին, միջնադարյան, նոր, նորագույն շրջաններ), համաշխարհային պատմություն (հին, միջնադարյան, նոր, նորագույն շրջաններ)
4	Մանկավարժության և հոգեբանության	Ընտանիքի դերը երեխայի դաստիարակության գործընթացում, սահմանամերձ գոտու երիտասարդների սթրես կայունության մակարդակի ազդեցությունը կենսական պայմանների վրա
5	Ընդհանուր տնտեսագիտության	Մրցակցության պաշտպանության բարելավում, բուհական համակարգի կառավարման բարելավում
6	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	Տավուշի մարզի զբոսաշրջային ներուժի ուսումնասիրություն և դրանք զբոսաշրջության մեջ ընդգրկելու հնարավորությունների դիտարկում
7	Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	Գրաֆների կողային ներկումներ, ծրագրավորման լեզուներ, Web-ծրագրավորում
8	Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտու-	Կոմպլեքս և ֆունկցիոնալ անալիզ, մակերեսով ինտեգրալի ֆունկցիաների դասերի վրա գործող գծային անընդհատ օպերա-

	թյան	տորներ, զբոսաշրջային քարտեզագրություն, ջրային և անտա-ռային ռեսուրսների մոնիթորինգ, ձայնի մոնիթորինգ
9	Գծանկարի, գունանկարի և քանդակի	Մանրանկարչություն, խեցեգործություն
10	Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի	Հայկական կարպետներ, գոբելեն, վիտրաժ

Աղյուսակ 2. ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	2015	2016	2017	2018	2019
1.	"Научный альманах" (Россия)	-	-	-	-	1
2.	"Воспитатель ДООУ" (Россия)	-	-	1	-	-
3.	"Молодой ученый" (Россия)	-	-	2	-	-
4.	"Этносоциология вчера и сегодня" (Россия)	-	2	-	-	-
5.	"Сибирский Математический журнал" (Россия)	-	1	-	-	-
6.	"Интернаука" (Россия)	-	-	1	-	-
7.	"Наука через призму времени" (Россия)	-	-	1	-	-
Ընդամենը՝		-	3	5	-	1


Աղյուսակ 3. Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	2015	2016	2017	2018	2019
1.	"International Academy of Science and Higher Education" (London)	1	-	-	-	-
2.	"European Research:Innovation in Science, Education And Technology" (London)	-	-	-	1	-
3.	GISAP: Physics, Mathematics and Chemistry	2	-	-	-	-
Ընդամենը՝		3	-	-	1	-



Աղյուսակ 4. Խրախուսում ստացած աշխատակիցների թիվը և դրամի չափը (հզ. դրամ)

Ֆակուլտետ/ամբիոն	2016թ.		2017թ.		2018թ.		2019թ.		Ընդ.
	թիվ	չափ	թիվ	չափ	թիվ	չափ	թիվ	չափ	
Բնական գիտությունների	14	330.0	5	105.0	5	120.0	-	-	555.0
Հումանիտար գիտությունների	18	375.0	11	235.0	6	170.0	1	20.0	800.0
Տնտեսագիտության	12	250.0	6	135.0	4	90.0	2	60.0	535.0
Կիրառական արվեստի	6	130.0	9	195.0	2	40.0	-	-	365.0
Համամասնաճյուղ. Ամբ.	-	-	-	-	2	60.0	-	-	60.0
Ընդամենը	50	1.085.0	31	670.0	19	480.0	3	80.0	2.315.0

1. Մասնաճյուղի էլ.կայքից օգտվելու ուսանողների ակտիվության մակարդակը




2. Բավարարվածությունը մասնաճյուղի էլ.կայքից



3. Կայքերի և լրատվամիջոցների ցանկը

- [Երևանի պետական համալսարան](#),
- [Տավուշի մարզպետարան` <http://bridgeofhopeijevan.blogspot.com/>](#) (<https://lurer.com/>,
<https://www.youtube.com/>,
- «Ա1+», «1TV.AM», «1lurer.am» (1-ին լրատվական),
- «Ijevan Tv»,
- “Youth Career Trail” (ֆեյսբուքյան էջ),
- <https://writeonarmenia.weebly.com/> (ՖԲ էջ),
- «heh.am»,
- «Teach For Armenia» (FB էջ),
- «CIVILNET.AM»,
- «MediamaxArmenia»,
- «cpsr.info»,
- «Armenian Public TV»,
- «armtimes.ru»,
- «hetq.am»,
- «aspu.am»,
- «am.undp.org»,
- «asparez.am»,
- «erit.am»,
- «armenpress.am»,
- «aravot.am»,
- «shamshyan.com»,
- «SHANTVNEWS», «shantnews.am»,
- «ARMDAY.AM»,
- «168.AM»,
- «The Press office of the President of Armenia»,
- «restarttimes.am», «yerkir.am»):

4. Կայքի այցելություններն ըստ տարեթվերի



Աղյուսակ 1. Մասնաճյուղի 179 դասավանդողների և 114 աշխատակիցների օտար լեզուներին տիրապետելու վիճակը (տոկոսներով)

Մակարդակը	Ռուսերեն		Անգլերեն		Ֆրանսերեն		Այլ լեզուներ	
	դաս. (100%)	վարչ. (87%)	դաս. (62%)	վարչ. (29%)	դաս. (19%)	վարչ. (21%)	դաս. (5%)	վարչ. (1%)
Կարդում և թարգմանում են բառարանով	0%	28%	11%	21%	2%	15%	0%	
Կարդում և կարողանում են բացատրվել	6%	0%	33%	1%	13%	3%	2% իտալ. 1% գերմ. 1% իսպ. 1% թուրք.	
Տիրապետում են ազատ	94%	59%	18%	8%	4%	3%	0%	1% վրաց.

Աղյուսակ 2. Միջոցառումներ, բաց դասեր օտար լեզվով՝ ուսանողների մասնակցությամբ

N	Ամսաթիվ	Բովանդակություն
1.	16.12.2019թ.	ԵՂՀ ԻՄ-ի 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում մասնաճյուղում կայացել է «Ֆրանսիայի և Հայաստանի քույր քաղաքներ» խորագրով միջոցառում, ուսանողները ֆրանսերենով ներկայացրել են յոթ քույր քաղաքների բարեկամության պատմությունը:
2.	13.12.2019թ.	«Անգլերեն լեզվի դասավարդություն» խորագրով ինտերակտիվ միջոցառում: Միջոցառման նպատակն էր ընդգծել և հիմնավորել անգլերենի՝ որպես հաղորդակցման համընդհանուր միջոցի կարևորությունը:
3.	28.11.2019թ.	ԵՂՀ ԻՄ-ի 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում մասնաճյուղում կայացել է «Miss language» լեզուների մրցույթը, մասնակիցները ներկայացրել են տարբեր լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն և չինարեն) բանաստեղծություններ, գրական երկերի հատվածներ և երգեր:
4.	05.10.2019թ.	Ուսուցչի միջազգային օրվան նվիրված միջոցառում, անցկացվել է միաժամանակ երեք լեզուներով՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն:
5.	22.05.2019թ.	Հանդիպում «Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում» կազմակերպության անդամներ Ջոս Միլինեդի, Ֆիլիպ Դրոմգենի, Լորանս Դրոմգենի հետ: Հանդիպման ժամանակ նրանք ակնարկային դասախոսություններ են կարդացել Ֆրանսիայում այդ ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների (Փարիզի Աստվածամոր տաճարի հրդեհի համաշխարհային արձագանքների, Ֆրանսիայում դեղին ժիլետավորների ցույցերի և այլնի) մասին:
6.	16.05.2019թ.	«Մերվիս» մասնագիտության առաջին կուրսում կայացել է բաց դաս, ուսանողները անգլերենով ներկայացրել են Տավուշի մարզի տեսարժան վայրերը (Մորո Ջորո եկեղեցին, Կարդան Մամիկոնյանի ծառը, «Լաստիվեր ռեզորթ» հյուրանոցային համալիրը, Իջևանի գինու և կոնյակի գործարանը, դենդրոպարկը և այլն):
7.	10.05.2019թ.	Վիլյամ (Ուիլյամ) Շեքսպիրի ծննդյան 455-ամյակին նվիրված միջոցառում:
8.	26.04.2019թ.	Բնության գրկում՝ Իջևանի դենդրոպարկում կայացել է «Տավուշի տեսարժան

		վայրերը » թեմայով դաս : Ուսանողները անգլերենով ներկայացրել են Տավուշի մարզի քաղաքներն ու գյուղերը, դրանց տեսարժան վայրերը, պատմական հուշարձանները, վանքերը և եկեղեցիները:
9.	05.04.2019թ.	Հեռակա ուսուցման համակարգի «Զբոսաշրջություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողները անգլերենով ներկայացրել են «Հայաստանի տեսարժան վայրերը» թեմայով զեկուցումներ :
10.	26.03.2019թ.	Ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումների շրջանակներում մեծն շանսոնյե Շառլ Ազնավուրին նվիրված գրական-երաժշտական հուշ-ցերեկույթ , ֆրանսերենով և հայերեն թարգմանությամբ, ներկայացվել է Շառլ Ազնավուրի կենսագրությունը, հնչել են Ազնավուրի ամենահայտնի ստեղծագործություններից:
11.	22.03.2019թ.	Ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումների շրջանակներում տեղի է ունեցել «Ամենախելացի ֆրանկոֆոնը» թեմայով ինտելեկտուալ խաղը : Հարցաշարը պարունակել է բազմաբնույթ հարցեր Ֆրանսիայի, ֆրանսիա-կան քաղաքակրթության, արվեստի, սպորտի, ֆրանկոֆոնիայի մասին:
12.	16.03.2019թ.	Կանանց տոնին նվիրված միջոցառում , լեզուն՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն:
13.	23.02.2019թ.	Սուրբ Վալենտինի և Սուրբ Սարգսի տոներին նվիրված միջոցառում , լեզուն՝ անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն:
14.	22.10.2018թ.	«Առաջնորդություն» դասընթացի երկրորդ հանդիպումը, որը նախաձեռնել էր «Քմյունիթի սենթր ֆոր դիվելոպմենթ» տարածաշրջանային համագործակցության ՀԿ-ն («Community Center for Development» Territorial Cooperation NGO): Դասընթացը անգլերենով վարել է ԱՄՆ-ի Խաղաղության կորպուսի «Համայնքի և երիտասարդության զարգացում» ծրագրի աշխատակից, ուսուցիչ, մարզիչ և դասընթացավար Ուիլյամ Ջոզեֆ (Ջոդի) Դոշերը , իսկ ԵՊՀ ԻՄ-ի «ԱԼԳ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Սուսաննա Սարուխանյանը ապահովել է սինխրոն (համաժամանակյա) թարգմանություն:
15.	15.10.2018թ.	«Առաջնորդություն» դասընթացի առաջին հանդիպումը, որը նախաձեռնել էր «Քմյունիթի սենթր ֆոր դիվելոպմենթ» տարածաշրջանային համագործակցության ՀԿ-ն: Դասընթացը անգլերենով վարել է ԱՄՆ-ի Խաղաղության կորպուսի «Համայնքի և երիտասարդության զարգացում» ծրագրի աշխատակից, ուսուցիչ, մարզիչ և դասընթացավար Ուիլյամ Ջոզեֆ (Ջոդի) Դոշերը , իսկ ԵՊՀ ԻՄ-ի աշխատակից Մարիետա Սարգսյանն ապահովել է սինխրոն (համաժամանակյա) թարգմանություն:
16.	10.10.2018թ.	Ֆրանկոֆոնիայի շրջանակներում միջոցառումը նվիրված էր գլխավորապես Փարիզի տեսարժան վայրերին:
17.	07.10.2018թ.	Ֆրանկոֆոնիայի միջազգային գազաթնաժողովի շրջանակներում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ են այցելել Իջևանի բարեկամ Վալանս քաղաքի պաշտոնական պատվիրակությունը և զբոսաշրջիկների 40 հոգանոց խումբը:
18.	20.04.2018թ.	Ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումների շրջանակներում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ են այցելել Ֆրանսիայի Պոլ Վալերի համալսարանի դասախոսներ Ֆրանսուա Ռուդոն, Ժերար Սիարին և Նիկոլա Թաթեյանը: Ֆրանսիացի դասախոսները հանդիպել են ուսանողների հետ և նրանց համար կարդացել դասախոսություններ:
19.	23.03.2018թ.	Միջբուհական մրցույթ «Ամենախելացի ֆրանկոֆոն 2018» ինտելեկտուալ խաղը, որը նախաձեռնել էր Մայր բուհը: Ինտելեկտուալ խաղին մասնակցել են ԵՊՀ-ի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, Վալերի Բյուրսովի անվան լեզվաբանական, Ֆրանսիական, Մանկավարժական համալսարանների

		ուսանողները: Մասնաճյուղի ուսանողները փայլուն են ներկայացել խաղին՝ լինելով առաջատար առաջին և երկրորդ փուլերում, փոքր-ինչ զիջելով երրորդում: 2 ուսանողներ եզրափակիչում գրավել են 3-րդ և 4-րդ հորիզոնականները:
20.	24.12.2016թ.	Ամանորին և Սուրբ ծննդին նվիրված գրական-երաժշտական միջոցառում , անգլերենով ներկայացվել է «Մոխրոտը» հեքիաթի բեմադրությունը:
21.	20.12.2017թ.	Անգլերեն լեզվով բաց դաս «ԻԿՄ» 1-ին կուրսում , ուսանողները ներկայացրել են մաթեմատիկայի հիմնական բաժինները և նրա տարրերը:
22.	01.12.2017թ.	«Հայկական ծագումով ֆրանսահայերը» խորագրով միջոցառում
23.	30.11.2017թ.	«Մերվիս» մասնագիտության ուսանողների մասնակցությամբ միջոցառում անգլերենով, որի նպատակն էր ուսանողներին տալ որպես էքսկուրսավար դրսևորվելու հնարավորություն:
24.	15.11.2017թ.	Բաց դաս անգլերենով «ԻԿՄ» 2-րդ կուրսում , ուսանողները ներկայացրել են խնդիրների լուծումներ, ցուցադրել բանաձևերի դուրսբերման եղանակներ, ծրագրերի կողավորման շնորհանդեսներ:
25.	26.04.2017թ.	Վիլյամ Շեքսպիրի մահվան 401-ամյակին նվիրված դասախոսությունների շարք:
26.	08.04.2017թ.	Սուրբ Զատիկի տոնին նվիրված միջոցառում (անգլերենով):
Այցելություն Ֆրանսիայի Վալանս քաղաք		
27.	01.04.2019թ.	ԵՊՀ ԻՄ-ի պատվիրակությունը հյուրընկալվեց Վալանսի հայկական ռադիո-յում: Նրանց ջերմորեն դիմավորեցին ռադիոյի տնօրեն պարոն Բաֆֆի Մտեփանյանը և հաղորդավարուհի տիկին Սուսաննա Փահլևանյանը, ով վարում է «Հարցազրույց» խորագրով հաղորդումը: Մասնաճյուղի ուսանող-ները պատմել են իրենց տպավորությունների, «Մաեստրիս» բարձրագույն դպրոցում ստացած գիտելիքների, հյուրըկալող ընտանիքների մասին:
28.	21.03.2019թ.	Ֆրանսիայի Վալանս քաղաքում ԵՊՀ ԻՄ-ի պատվիրակությունը հյուրընկալվել է մարզային “France Bleu Drôme Ardèche” ռադիոընկերությունում: Վալանսի փոխքաղաքապետ և «Պատրաստենք միասին» հաղորդման հաղորդավար Ֆրանկ Դոմանի և Վալանսում ճանաչված հրուշակագործ Արմինե Իսպիրյանի հետ մասնակցել են հայկական խոհանոցին նվիրված հաղորդմանը: ԵՊՀ ԻՄ-ի հինգ ուսանողուհիները ներկայացրել են հարիսայի, տոլմայի, քլուֆթայի, փախլավայի և հայկական ավանդական գաթայի պատրաստման բաղադրատոմսերը:
29.	27.03.2019թ.	Ֆրանսիա (Վալանս) կատարած այցի շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի պատվիրակության անդամները հյուրընկալվել են “Le Dauphiné Libéré” մարզային թերթի խմբագրությունում : Համալսարանականները ներկայացրել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը, պատմել երկրում կատարված փոփոխությունների մասին:
30.	12.04.2018թ.	Ֆրանսիա (Վալանս) կատարած այցի շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի պատվիրակության անդամները հյուրընկալվել են “Le Dauphiné Libéré” մարզային թերթի խմբագրությունում :
31.	10.04.2018թ.	Ֆրանսիայի Վալանս քաղաքում ԵՊՀ ԻՄ-ի պատվիրակությունը հյուրընկալվել է մարզային “France Bleu Drôme Ardèche” ռադիոընկերությունում : Վալանսի փոխքաղաքապետ և «Պատրաստենք միասին» հաղորդման հաղորդավար Ֆրանկ Դոմանի հետ մասնակցել են հայկական խոհանոցին նվիրված հաղորդմանը:
32.	16.09.2015թ.	Իջևանի մասնաճյուղ են այցելել Վալանսի պատվիրակության ներկայացուցիչները ՝ Վալանսի փոխքաղաքապետի գլխավորությամբ: